

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՆԵՆԻ ԲԱՌԱԿԱՆ ՀՈՄԱՆՇԱՅԻՆ
ԵՎ ՀԱԿԱՆՇԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռ. Ն. ՇԱՆՈՒՆՑ

Հայտնի է, որ բառական հոմանիշները բնորոշվում են որպես իմաստով նման կամ նույնական, բայց արտահայտությամբ տարբեր լեզվական միավորներ: Վերջին ժամանակներս դրանց նկարագրության տեսական և գործնական (հոմանիշների բառարաններ կազմելը) ուսումնասիրության փաստական հայտ է: Սակայն բառական հոմանշային և այլ շարքերի հարաբերության ուսումնասիրությունը նոր է միայն սկսվում: Այսպես օրինակ՝ բառական հոմանիշների և հականիշների հարաբերությունների բնույթն ու առանձնահատկությունները բավարար չափով չեն ուսումնասիրվել լեզվաբանական գրականության մեջ: Իսկ հայերենի բառական այդ շարքերի հարաբերություններն ու կապերը ընդհանրապես ուսումնասիրության առարկա չեն դարձել:

Սույն հոդվածում փորձում ենք քննել ժամանակակից հայերենի բառական հոմանշային և հականշային շարքերի հարաբերություններն ու առանձնահատկությունները:

Լեզվի բառային համակարգում կան որևէ հատկանիշով առանձնացվող բառային խմբեր, որոնց միջև գոյություն ունեն որոշակի կապեր և հարաբերություններ: Այդ կապերի և հարաբերությունների պայմանավորվածությունը բխում է լեզվի համակարգային բնույթից: Լեզվի համակարգային բնույթը բացահայտող երևույթներից մեկն էլ հականիշ և հոմանիշ բառերի միջև եղած հարաբերություններն են, որոնց վերհանումը կարող է հետաքրքրական լինել մի շարք տեսակետներից: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ուսումնասիրության ընթացքում ոչ միայն բացահայտել հականշական հարաբերություններ արտահայտող բառերի իմաստային հակադրությունները, այլև նրանց համապատասխան հոմանշային շարքերի առանձնահատկությունները, իմաստային և ոճական նուրբ տարբերությունները, տարբեր բառերի հետ կապակցվելու նրանց հատկանիշները:

Հականշային և հոմանշային հարաբերությունների մեջ են գտնվում ոչ միայն այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի հատկանիշ և հատկանիշի հատկանիշ, այսինքն՝ ածականներն ու մակբայները, այլ նաև ուրիշ խոսքի մասերի պատկանող բառերը, ինչպես՝ գեղեցիկ, սիրուն, հանելի—այլադրական, տգեղ, տհաճ, արտափուտ—արտաֆնալիս, ներփուտ—ներֆնալիս, ատել, հսկակերել—սիրել, համակերել, բարեկամություն, մոտիկություն, հարազատություն—քշնամություն, հեռվություն, խորքություն և այլ հոմանշային շարքի անդամները կարելի է տրոհել՝ կազմելով համապատասխան զույգեր, որոնք ունեն հակադիր իմաստներ և կազմում են հականշային խմբեր:

- | | |
|-----------------------|--------------------------------|
| Այսպես՝ | |
| 1) գեղեցիկ-այլանդակ | 3) ատել-սիրել |
| սիրուն-տգեղ | համակրել-հակակրել |
| հաճելի-տհաճ | 4) բարեկամություն-թշնամություն |
| 2) արտաքուստ-ներքուստ | մոտիկություն-հեռավորություն |
| արտաքնապես-ներքնապես | հարադատություն-խորթություն |

Հականշական խմբերի կազմավորմանը նպաստում են մի շարք հատկանիշներ, ինչպես հոմանշային շարքեր կազմող միավորների իմաստային տարողությունը, խոսքի մեջ նրանց հանդես գալու բաշխվածության հարաբերությունը: Օրինակ՝ հայոց լեզվում «իզական սեռի զավակ» իմաստն են արտահայտում աղջիկ, դուստր, օրիորդ, կույս, աղջնակ, աչիկ բառերը, որոնք հակադրվում են «արական սեռի զավակ» հասկացությունն արտահայտող տղա, որդի, Երիտասարդ, տղամեծ, ուսուր, մանչ բառերին: Հակադիր իմաստ արտահայտող հոմանշային այս շարքերի անդամներից ամենից շատ կայուն հականշություն են արտահայտում աղջիկ-տղա միավորները, որոնց հականշությունը կայունացվել է հայոց լեզվի զարգացման ընթացքում: Այդ բառերի հականշությանը նպաստել է նաև խոսակցական պրակտիկայում տարբեր ոճի՝ դրավոր և բանավոր խոսքում դրանց օգտագործելը, ինչպես նաև այդ միավորներից համապատասխան համարմատ հականշային խմբեր կազմելը, դարձվածքային արտահայտությունների առաջանալը և այլն: Ինչպես օրինակ՝ աղջկական-տղայական, աղջկավարի-տղավարի, աղջիկ ևս թե՛ տղա-գործող հաջող է, թե՛ անհաջող:

Ժամանակակից արևելահայ գրական լեզվում այս հոմանշային շարքերի անդամները հավասարապես չեն հակադրվում իրար: Օրինակ՝ օրիորդ բառը հականշություն է կազմում տղա, Երիտասարդ բառերի հետ, բայց ոչ որդի բառի հետ: Այն չի հակադրվում նաև մանչ բառին, որովհետև վերջինս հանդես է գալիս միայն արևմտահայ գրական տարբերակում: Կույս բառը իր հիմնական «անարատ աղջիկ» իմաստով դուրս է մնում հակադրության այս շարքից, թեև այն իր հերթին կարող է հականշային հակադրության մեջ լինել միանգամայն այլ բառի հետ, որը տրված հոմանշային շարքի անդամ չէ:

Հոմանշային առաջին շարքում ունենք աղջիկ բառի նվազական-փաղաքշական երկու ձևեր աչիկ, աղջնակ, որոնցից առաջինը օգտագործվում է արևելահայ գրական տարբերակում, մյուսն՝ ավելի շատ արևմտահայ գրական տարբերակում. «Վարակումը կսպառնա նաև մյուսներուն և մտաբերելով ուրամյա աղջնակին աղու նայվածք սիրտը կղողար վախով» (ԶԵՆ, 1959, էջ 224):

Հոմանշային առաջին շարքի անդամներից դուստր բառը ցուցաբերում է որոշ առանձնահատկություններ. այն իր ուղղակի իմաստով հակադրվում է որդի բառին, ինչպես նաև ժամանակակից հայերենում քիչ գործածվող, բարձր ոճի ստեղծագործություններում օգտագործվող, գրաբարյան ուսուր բառին: Հաճախ այս վերջին երկուսն օգտագործվում են որպես համադր անդամներ մեկ նախադասության սահմանում. «...նրանք դաստիարակում են հայոց ուսուրներին և դուստրներին, որպեսզի նրանք չխոնարհվեն ստրկության առաջ» (Ե. Ե., 1963, № 57): Դուստր բառը, սակայն, փոխաբերական իմաստով շուրի իր հականիշը, հայտնի է, որ այն դիտական գրականության

մեջ կիրառվում է «միևնույն ծագում ունեցող, միևնույն հիմքից, միևնույն օրգանիզմից առաջացած» իմաստով: Կան դրանց համապատասխան կայուն կապակցություններ, ինչպես դուստր լեզուներ. դուստր օրգանիզմներ, դուստր բույսեր և այլն: «Բաղմացման պարզ ձևը անսեռ բաղմացումն է, երբ մեկ օրգանիզմի բաժանման շնորհիվ առաջանում են երկու դուստր օրգանիզմ» (ԱԽ ԳԿԲ, 1967, էջ 95): «Ընձյուղների ծայրերին առաջ են գալիս դուստր բույսեր՝ օղային արմատներով» (Ե. Ե., 1959, № 92):

Հակադիր իմաստ ունեցող հոմանշային շարքերի անդամների հակառակությունը ժամանակի ընթացքում կարող է փոփոխության ենթարկվել, որը բացատրվում է այդ անդամների իմաստափոխության դանդաղ ձևերով, ինչպես իմաստների ընդլայնմամբ, նեղացմամբ, բաղարկությամբ, մթագնմամբ և այլն: Օրինակ, հոմանշային երկրորդ շարքի տղա բառը ժամանակակից արևելահայ գրական հայերենում կրել է իմաստային որոշակի փոփոխություններ: Նախկին «նորածին կամ ծծկեր երեխա, տղա կամ աղջիկ», «փոքրահասակ երեխա մինչև պատանեկության հասակը», «որևէ հասակի երեխա՝ զավակ» իմաստներն այժմ չունենք: Այդ իմաստները հատուկ են գրաբարին և արևմտահայերենին: Արևելահայ գրական հայերենում այս իմաստներով օգտագործվում է «Լեռեխա» բառը: Տղա բառը ժամանակակից արևելահայերենում մասնավորվել է միայն արական սեռի համար և այժմ այն հականշական հակադրություն է կազմում աղջիկ, օրիորդ, դուստր բառերի հետ: Իմաստային փոփոխության է ենթարկվել նաև օրիորդ բառը. հին հայերենում այն ուներ 1. թագավորական ցեղից կույս աղջիկ, թագավորի դուստրը կամ քույրը, 2. իշխանական տան ցեղից կույս աղջիկ՝ նախարարի, սեպուհի, ազնվականի դուստրը կամ քույրը» իմաստները, որոնք չկան ժամանակակից գրական հայերենում: Բացի իր հիմնական իմաստից այն կիրառվում է նաև այլ իմաստով. ընդունված է այդ բառի գործածությունը որպես կոշական, հարգական ձև, որով դիմում են ծանոթ կամ անծանոթ աղջկա: «— Եվ մեր տունը չի ձանձրացրել ձեզ,— ավելացրեց տանտիրոջ գեղեցիկ աղջիկը անկեղծ ժպիտով. «Շնորհակալ եմ, օրիորդ».— ասաց Վարդանը» (ԲԵ, հատ. 3, 1955, էջ 372):

Հոմանշային երկրորդ շարքի բառերն իրենց տարողությամբ ավելի լայն են արևմտահայ գրական տարբերակում, քան արևելահայերենում. այդ շարքում է գտնվում նաև մանչ բառը, որը որպես «արական սեռի զավակ» իմաստ ունեցող բառ օգտագործվում է միայն արևմտահայերենում. «Վանական մամուլը չուզեց, որ կին գտնվի վաճֆի մեջ տպված քատրերգության մեջ, ուստի կինը հանեց և տեղը մանչ դրավ» (ՀՊԵ, հատ. 1, 1954, էջ 292):

Ժամանակակից հայերենի հակադրական հարաբերություններ արտահայտող հոմանշային երկշարքերը հանդես են բերում տարբեր տիպի հարաբերություններ, ըստ որոնց դրանք կարելի է ստորաբաժանել երկու խմբի.

1) հոմանշային շարքի ցանկացած անդամը կայուն հականշական խումբ է կազմում մյուս հոմանշային շարքի ցանկացած անդամի հետ.

2) հոմանշային շարքի մեկ անդամը ավելի կայուն հականշային հարաբերություն է կազմում մյուս շարքի միայն մեկ անդամի հետ:

Կայուն հականշական հարաբերություններ են ցուցաբերում մեծ մասամբ այն հոմանշային խմբերը, որոնց բաղադրիչները հեշտությամբ հակադրվում են տարբեր դիրքերում, հանդես են բերում իմաստային նվազագույն տար-

բերություններ և ոճական տեսակետից ունեն նման հատկություններ: Եթե հոմանշային խմբերի միավորները նշանակենք տառերով, ապա նրանց հականշային հակադրության հարաբերությունը կարտահայտվի այսպես.


առաջին շարքի հոմանիշներ՝	ա, բ, գ
երկրորդ շարքի հոմանիշներ՝	ա ₁ , բ ₁ , գ ₁
հականշային հարաբերություն՝	ա — ա ₁ , բ — բ ₁ , գ — գ ₁
	բ — ա ₁ , բ — բ ₁ , գ — գ ₁
	գ — ա ₁ , գ — բ ₁ , գ — գ ₁

Օրինակ՝ աղոտ, դժգույն, անպայծառ, անփայլ, գունատ և պայծառ, վառ, լուսավոր, փայլուն, վառվռուն հոմանշային շարքի բառերը կապակցվում են տարբեր թեմատիկ խմբերի անդամներից շատերի հետ, տարբեր դիրքերում փոխարինում են միմյանց և կազմում մի շարք հականշային խմբեր.

- 1) Աղոտ—պայծառ, վառ, լուսավոր, փայլուն, վառվռուն.
- 2) դժգույն—պայծառ, վառ, լուսավոր, փայլուն, վառվռուն.
- 3) անպայծառ—պայծառ, վառ, լուսավոր, փայլուն, վառվռուն.
- 4) անփայլ—պայծառ, վառ, լուսավոր, փայլուն, վառվռուն.
- 5) գունատ—պայծառ, վառ, լուսավոր, փայլուն, վառվռուն:

Այդպես էլ քաջ, արի, կտրին, խիզախ, քաջարի, անվախ, աներկյուղ, անվեհեր և վախկոտ, երկչոտ, անարի հոմանշային շարքի բառերը կարելի է կապակցել տարբեր թեմատիկ խմբերի բառերից շատերին, ինչպես՝ անձնավորություն, հերոս, մարդ, զինվոր, մարտիկ, տղամարդ, երիտասարդ, պատանի, աղջիկ, կին, տղա և այլն:

Հոմանշային և հականշային նման առանձնահատկություններ ունեցող բառական խմբերի հարաբերությունները կարելի է պատկերել հետևյալ գծապատկերով.



Ինչպես պարզ երևում է գծապատկերից, հականշական կայուն հարաբերություններ են արտահայտվում այն դեպքերում, երբ հնարավոր է հականիշներն ադատորեն փոխարինել իրենց հոմանիշներով. բնդ որում, հոմանիշ բառերի իմաստները որքան մոտ են, այնքան ավելի մեծ է նրանց փոխադարձ փոխարինելիության հնարավորությունը, և հակառակը, որքան հոմանիշների իմաստային տարբերություններն զգալի են, այնքան դժվարանում է նրանց փոխադարձ փոխարինելիությունը: Օրինակ՝ «Մոռացա ուղիներս

պայծառ, Իմ սրտում դռը մութն է շնչում» (ՎՏՆԺ, հատ. 1, 1960, էջ 62) նախադասության մեջ պայծառ բառը փոխարինելով լուսավոր բառով, մութ բառը՝ խավար բառով, նախադասությունը իմաստային փոփոխության չի ենթարկվի (այստեղ ի նկատի չունենք տաղաչափական կանոնների խախտումը և բանաստեղծական բարեհնչունությունը)։

Այդպիսի օրինակ կարող են լինել նաև լուսարաց, արշալույս, այգ, այգարաց, լուսաղեմ, արեածագ և արեամուտ, վերջալույս, աղջամուղջ, մթնշաղ հոմանշային շարքերի անդամները, որոնց բոլոր իմաստները ցույց են տալիս օրվա տարբեր պահերը՝ վաղ առավոտվա և երեկոյի սկիզբը։

Հոմանշային շարքերի ավելի կայուն հականշային հարաբերություններ արտահայտող անդամները ոչ բոլոր դեպքերում կարող են ազատ կերպով փոխարինվել միմյանցով։ Օրինակ՝ գալ, ժամանել և գնալ, մեկնել, հարուստ, ունեւոր և աղքատ, շունեւոր հոմանշային շարքերի անդամների հականշությունը կարելի է արտահայտել հետևյալ խմբերով. գալ-գնալ, ժամանել, մեկնել, հարուստ-աղքատ, ունեւոր-շունեւոր։ Կամ արդար, ազնիվ, իրավացի, արդարացի և անարդար, անազնիվ, անիրավացի, անարդարացի բառերը ավելի կայուն հականշային հարաբերություն կարտահայտեն արդար-անարդար, ազնիվ-անազնիվ, իրավացի-անիրավացի, արդարացի-անարդարացի խմբերով։ Նման դեպքերում հականշային հակադրությունների հարաբերությունը կարելի է արտահայտել այսպես.

ա—ա₁, բ—բ₁,
գ—գ₁, դ—դ₁ և այլն։

Նման հարաբերություններ ունեն մեծ մասամբ այն հոմանշային շարքերի միավորները, որոնք կազմում են համարմատ հականշային խմբեր։

Այդպիսի հոմանշային շարքերից են, օրինակ՝ կարող, զորեղ-անկարող, անզոր (կարող-անկարող, զորեղ-անզոր), պարտանանաչ, բարեխիղճ, անպարտանանաչ, անբարեխիղճ (պարտանանաչ-անպարտանանաչ, բարեխիղճ-անբարեխիղճ), զգույշ, ուշադիր, անզգաստ, անզգույշ, անուշադիր, անզգաստ (զգույշ-անզգույշ, ուշադիր-անուշադիր, անզգաստ-զգաստ)։ Նման հականիշ բառերն իրենց հոմանիշներով փոխարինելու դեպքում նախադասությունը ենթարկվում է իմաստային փոփոխության։ Օրինակ՝ աննկատելի, աննշմարելի, անտեսանելի և նկատելի, նշմարելի, տեսանելի, աչքի բնկնող հոմանշային շարքի բառերը ոճական տարբեր երանգներից բացի ունեն նաև իմաստային տարբերություններ, ուստի «Ես աննկատելի դուրս եկա թաքստոցից և հմայված նայում էի շուրջս» (ՀԹՆԺ, հատ. 3, 1949, էջ 78) և «Սակայն այդ չի նշանակում, թե խուրշուդ Բեյր աննշմարելի անձնավորություն էր Զանգեզուրում» (ԱԲՆ, 1955, էջ 206) նախադասություններում աննկատելի և աննշմարելի բառերը հնարավոր չէ փոխարինել իրենց հոմանիշներով։

Կան նաև այնպիսի հոմանշային շարքեր, որոնց բաղադրիչները միմյանց նկատմամբ ունեն խառը հարաբերություններ։ Դրանք մեծ մասամբ այն հոմանշային շարքերն են, որոնց բաղադրիչների կազմում կան և՛ համարմատ, և՛ տարարմատ հականիշներ։ Օրինակ՝ միամիտ, դյուրահավատ, անկեղծ և խորամանկ, անհավատ, կեղծ հոմանշային երկու շարքերի բաղադրիչները համապատասխանաբար կազմում են հետևյալ հականշային խմբերը. միամիտ-խորամանկ, դյուրահավատ-անհավատ, անկեղծ-կեղծ։

Կան հոմանիշ բառերի այնպիսի շարքեր, որոնց բաղադրիչներից որևէ մեկը հիմնական է: Կարելի է ասել, որ ավելի շատ հիմնական են այն հոմանիշները, որոնք ոճական տեսակետից չեզոք են և չեն արտահայտում հուզական զանազան երանգներ: Այդպիսի հականիշները սովորաբար ավելի կայուն են լեզվում և շատ են գործածվում խոսքի ընթացքում: Օրինակ՝ հակադիր իմաստ ունեցող մրսել, սառչել, սրքսրքալ, դուլալ և տաֆանալ, շոգել, ֆրտնել, վառվել, ևնալ հոմանշային շարքերի բաղադրիչներից յուրաքանչյուրը տարբերվում է իր ոճական դրոշմավորումով: Մրսել և տաֆանալ բառերը ոճական տեսակետից չեզոք են և շատ են գործածվում մեր լեզվում. հոմանշային այդպիսի շարքերը հիմնականում հատուկ են բայերին, ածականներին, երբեմն նաև մակբայներին, որոնք ցույց են տալիս այդ խոսքի մասերին պատկանող բառերի եղելության, հատկանիշի, ինչպես նաև հատկանիշի հատկանիշի ավելացման չափը, սաստկացման ծավալը:

«Կիրակոսը մրսել էր, անկողին ընկել» (ՀԹԵԺ, հատ. 3, 1949, էջ 80), «Բուրդի տակ մի փոքրիկ քարածալո կար, որ տաֆանում էր արևի ճառագայթներից» (ԴԴԵ, հատ. 8, էջ 7) նախադասություններում մրսել և տաֆանալ բառերն օգտագործված են իրենց ուղղակի իմաստով՝ առանց եղելության չափազանցության կամ ավելացման: Հոմանշային շարքի մնացած միավորները կարելի է դասավորել ըստ նրանց արտահայտած սաստկացման չափերի. սրքսրքալ, դուլալ, սառչել-շոգել, ֆրտնել, ևնալ, վառվել:

Հայոց լեզվի ճկուն իմաստային համակարգը հնարավորություն է տալիս հարկ եղած դեպքում այդ միավորներն օգտագործել միմյանց փոխարեն, ուստի գրողը կամ խոսողը յուրովի է օգտագործում այդ հոմանիշներից յուրաքանչյուրը. «Ամառը մրսում էր գյուղ բարձրանալիս, ձմեռը ֆրտնելով իջնում ձորը» (Մ. Ս., 1969, էջ 9): «Ինչքան փոքր էր նրա ղեղնած ձեռքը, որ դողում էր մրսող թռչունի նման» (ԱԲԵ, 1955, էջ 681): «Քիչ էր մնում ցրտից սառչելի. եկա, որ մի քիչ տաֆանամ» (ՀԹԵԺ, հատ. 3, 1949, էջ 288): «Մրսել էր թեկուղ և սրքսրքում էր ինչպես թրջված հավ, ուղեղը սակայն ևռում էր անսանձ խոհերի տապից» (ԵԶԸԵ, 1954, էջ 440):

Կան հոմանշային շարքեր, որոնց բաղադրիչներից մի քանիսը կամ բոլորը իրենց ընդհանուր իմաստներով թեև հակադրվում են մյուս շարքի անդամներին, սակայն առանձին վերցրած չունեն իրենց հականիշը: Այսպես օրինակ՝ առատ, լի, շատ, աղեցուն, նոխ, փառքամ հոմանշային շարքի փառքամ բառը իր ուղղակի իմաստով չունի իր հականիշը սուղ, ֆիշ, սակավ հոմանշային շարքում: Կամ դանդաղ, համբ, անշաալ և արագ, շուտ, շտապ, հապենալ, կայծակնային հոմանշային երկշարքերում շուտ-դանդաղ, շուտ-համբ, դանդաղ-հապենալ բառերը հականշական հարաբերություններ չունեն:

Շատ դեպքերում հականշական հարաբերություններ արտահայտող բառերի հոմանշային շարքերի անդամներն ունենում են համադրական և հարադրական ձևերի տարբեր գործողություն, ինչպես խոսել, ասել, բարբառել, լեզվին տալ և լռել, պապանձվել, լուռ մնալ, ոռոս մնալ, ծպտում չհանել, ձայնը կտրել, կամ ընկղմվել, սուզվել, խորասուզվել, ջրասույզ լինել և բարձրանալ, Երես անել, Երես դուրս գալ: Նման բառական միավորներից հակադրություն կազմելիս պետք է զգույշ լինել և հաշվի առնել, որ դրանցից յուրաքանչյուրն ունի իմաստային, կիրառական ոլորտի և ոճական նուրբ տար-

բերություններ: Ուստի հակադիր հոմանշային շարքերի միավորներից խոսողը պետք է աշխատի ընտրել հատկապես այն հոմանիշը, որն ավելի ճիշտ կարտահայտի իր միտքը: Բացի այդ, հնարավոր է նաև, որ խոսողը խոսքի ընթացքում որևէ նպատակով ցանկանա ընդդժել հոմանիշներից որևէ մեկի կարևորությունը տվյալ իրադրության մեջ:

Կան այնպիսի հականիշ բառեր, որոնք իրենց հիմնական իմաստներով ունեն երկու և ավելի հականիշ բառեր, սրանք էլ իրենց հերթին՝ համապատասխան հոմանշային շարքեր: Դրանք եռանդամ, երբեմն նաև բառանդամ հականշային խմբեր են իրենց հոմանշային շարքերով: Այս դեպքում լինում են ոչ թե երկու, այլ երեք և ավելի հոմանշային շարքեր՝ նայած թե որքան հականիշ ունի տվյալ բառը: Օրինակ՝ մեռնել բային հավասարապես հականիշ են ծնվել, ապրել, վերակենդանանալ բայերը: Դրանց համապատասխան հոմանշային շարքերը կլինեն.

ծնվել, ծնունդ առնել, աշխարհ գալ
մեռնել, մահանալ, վախճանվել
ապրել, լինել, գոյություն ունենալ
վերակենդանանալ, վերածնվել, հարություն առնել

Հայերենում ավելի տարածված են եռանդամ հականշային խմբերն իրենց համապատասխան հոմանշային շարքերով, ինչպես օրինակ՝

նիշտ	սխալ	լուրջ	քեր
	սուտ		կատակ

սխալ, սխալական, բյուր, աննիշտ
նիշտ, նշգրիտ, նշմարիտ, ստույգ, հավաստի
սուտ, ստություն, աննիշտ, խաբեություն, կեղծիք

քեր, քերամիտ, քերաբարո
լուրջ, լրջախոհ, լրջամիտ, լրջաբարո, ծանր, ծանրաբարո
կատակ, հանաֆ (խոսակցական)

Վերջին երկու օրինակներում հականշություն արտահայտող շարքերի կենտրոնները նիշտ, լուրջ բառերն են, որոնք նաև հոմանշային միջին շարքերի հիմնաբառերն են:

Սխալ և սուտ, քեր և կատակ բառերով սկսվող բառային շարքերը հոմանշային ծայրային շարքերն են: Նման հականիշ բառերի և նրանց հոմանշային շարքերի անդամների հարաբերությունն արտահայտվում է իր յուրահատկություններով. այսպես՝ հոմանշային միջին շարքի հիմնաբառերը սովորաբար այնպիսի բառեր են, որոնք ոճական տեսակետից չեզոք են, ավելի շատ են դործածվում խոսքի մեջ: Այդ բառերը կայուն հականշային հարաբերություն են կազմում երկու հոմանշային ծայրային շարքերի ցանկացած անդամի հետ (ինչպես մեր օրինակներում նիշտ-սխալ, նիշտ-սուտ, լուրջ-քերամիտ, լուրջ-կատակ և այլն):

Հոմանշային ծայրային շարքի անդամները միմյանց նկատմամբ հականշային հարաբերություններ չեն արտահայտում (ինչպես սուտ-սխալ, խսրեություն-քյուր, քերե-կատակ և այլն)։

Հակադիր իմաստներ ունեցող հոմանշային շարքերի անդամների համադրությունը, ինչպես նաև այդ շարքերի բաղադրիչների հականշական հարաբերությունների բացահայտումը օգտակար է նաև այլ տեսակետից. դրանք կնպաստեն որոշելու հոմանշային շարքերի սահմանները։ Օրինակ՝ Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» մատչելի և անմատչելի գլխաբառերով բերվում են հետևյալ հոմանշային շարքերը. «1. դյուրամոտ, դյուրամատույց, դյուրամատչելի, դյուրահաղորդ, դյուրաձեռն (հղվդ.)։ Դյուրին, հեշտ։ 2. Հասկանալի, դյուրիմաց, դյուրըմբռնելի։ 3. Դյուրագին, էժանագին, էժան, ձեռնտու և «1. Անառիկ, անմատույց, անհասկանալի, անհաս, դժվարակոխ, անմատնելի, անմուտ, անել։ 2. Անմերձենալի, անհղիկ, անձեռնահաս, անշոշափելի։ 3. Տես թանկ»¹։

Բառական այս շարքերի բաղադրիչների, հականշական հարաբերությունների վերհանումը ցույց է տալիս, որ առաջին շարքի դյուրին, հեշտ բառերի հականիշը կլինի դժվար. դյուրըմբռնելի բառինը՝ դժվարըմբռնելի։ Երկրորդ շարքի անհաս բառի հականիշը կլինի հասանելի, անել բառինը՝ ելանելի, անձեռնահաս բառինը՝ ձեռնահաս (այստեղ մենք չենք խոսում այն բառերի մասին, որոնք զործածական չեն ժամանակակից գրական հայերենում, քանի որ բառարանն ընդգրկում է ոչ միայն ժամանակակից հայերենի բառական հոմանիշները)։ Հետևապես տվյալ հոմանշային շարքերը կարելի է լրացնել այդ բառերով։ Կամ նույն բառարանում բերած «Հաջող, նպաստավոր, լավ, հաճախ, բարեհաջող, բարեպատեհ, աջ (փխբ.) և «անհաջող, անբարեհաջող, աննպաստավոր, անբարենպաստ, ձախող, ձախ։ 2. Տե՛ս անհաջողակ»²։ Հոմանշային շարքերի համեմատությունը և նրանց անդամների հակադրությունները ցույց են տալիս, որ հոմանշային շարքերը կարելի է լրացնել այլ բառերով, այսպես. կան հաջող-անհաջող, նպաստավոր-աննպաստավոր, բարեհաջող-անբարեհաջող, աջ-ձախ. մինչդեռ հոմանշային առաջին շարքում տրված է բարեպատեհ, երկրորդ շարքում պակասում է անբարեպատեհ. կամ երկրորդ շարքում տրված է անբարենպաստ, առաջին շարքում պակասում է բարենպաստ բառը։

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից հայերենի բառային համակարգում իրենց ուրույն տեղն ունեն բառական հոմանշային և հականշային խմբերը։ Այդ խմբերը հանդես են բերում տարբեր առանձնահատկություններ, որոնք ամենից առաջ վերաբերում են հոմանշային շարքի անդամների կայուն և ոչ կայուն հականշական հարաբերություններին։ Կայուն հականշային հարաբերություն ունեցող բառական հոմանիշները մեծ մասամբ լինում են այնպիսի բառեր, որոնք ունեն իմաստային ընդհանուր կողմեր, նման բաշխվածության հարաբերություն և բառական կապակցելիության ընդհանուր գծեր։

¹ Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 441 և 59։

² Նույն տեղում, էջ 369 և 53։

Հականշական հարաբերություններ ունեցող հոմանշային շարքերի անդամների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հոմանշային շարքի մեկ անդամը կարող է ունենալ մի քանի հականիշներ:

ՀԱՄԱՌՈՏԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԵ—Ա. Բակունց, Երկեր
ԱՌԳԿՐ—Ա. Ռուիկյան, Ելուդատնտեսական կենդանիների բուժում
ԴԴԵ—Դ. Դեմիրճյան, Երկեր
ԵԶԸԵ—Ե. Չարենց, Ընտիր Երկեր
Ե. Ե.—Երեկոյան Երևան
ԶԵԵ—Զ. Եսայան, Երկեր
ՀԹԵԺ—Հ. Բումանյան, Երկերի ժողովածու
ՀՊԵ—Հ. Պարոնյան, Երկեր
Մ. Ս.—Մ. Սարգսյան, Զինվորներ և սիրահարներ
ՎՏԵԺ—Վ. Տերյան, Երկերի ժողովածու
ՐԵ—Րաֆֆի, Երկեր

СООТНОШЕНИЕ РЯДОВ ЛЕКСИЧЕСКИХ СИНОНИМОВ И АНТОНИМОВ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Р. Н. ШАЛУНЦ

(Р е з ю м е)

Соотношение и связи лексических синонимических и антонимических рядов армянского языка до настоящего времени не подвергались специальному изучению. В статье рассматриваются взаимоотношение и особенности указанных лексических рядов современного армянского языка.

Лексические синонимические и антонимические ряды обладают разной спецификой, в частности, стабильными и нестабильными антонимическими отношениями членов. Стабильные антонимические отношения свойственны в основном тем синонимическим рядам, компоненты которых легко противопоставляются в разных позициях, имеют минимальные семантические различия, сходную дистрибутивную соотносимость и общие черты лексической сочетаемости.